

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Երկայն մորուքին վնասները :

Լնուանի Լիպեր գաղղիացի Պա-
րոնը, իր մէկ բժշկութեան դասախո-
սութեանը մէջ շատ զուարճալի կեր-
պով մը կը խօսի մազի ու մօրուաց՝ ա-
ռողջութեան նկատմամբ ունեցած վե-
րաբերութեանը վրայ : Ինքը կ'ապա-
ցուցանէ որ մօրուքը երկայն թողուլը
շատ ֆնասակար է ծնօտին :

Լյոս հիւանդութիւնը արդէն ծա-
նօթ էր նաև Հռովմայեցւոց, ու մաս-
նաւոր անուամբ ալ Mentágra կը կո-
չէին որ իշխալաւ ըսել է : Պլինիոս սար-
սափած կը պատմէ թէ իրմէ առաջ
չճանցողած հիւանդութիւն մը հիմա
բոլոր մարդկանց երեսը կ'ապականէ .
որ թէպէտ մահաբեր ալ չըլլայ, բայց
շատոնք, կ'ըսէ, ալ աւելի յանձն կ'առ-
նուն մեռնիլ քան թէ այն սուր ցաւերը
քաշել : Իժիշկները, (չսուած բան)
զարմացան մնացին, ու այնպէս շփոթե-
ցան որ հարկ եղաւ որ Լէքսանդրիոյ
հռչակաւոր դպրոցին դիմեն : Լյոսպէս
կ'ըսէ Պլինիոս : Լիպեր խորին քննու-
թեամբ մը այլ և այլ այսպիսի դէպքե-
րու իջնալով՝ կը գտնայ որ Պլինիոսի
յիշած այս հիւանդութիւնը հին աւե-
լի զօրացած է մասնաւորապէս՝ ուր որ
երկար մօրուք կը ձգէին, մանաւանդ
արևելք, ուր որ գրեթէ միշտ տիրած
է մօրուք ձգելու սովորութիւնը, թէ-
պէտև ոչ միշտ ամէն դասուց մէջ : Գաղ-
ղիոյ մէջ ալ, կ'ըսէ, օրինակ իմն, երբոր
Հենրիկոս Գին ատենները մօրուք ձգելը
նորեւուկ բան մը դարձաւ, կզակացաւ
տիրեց . և որ հետզհետէ տկարացաւ՝
երբ Հենրիկոս Գին օրերը սկսան կար-
ճեցընել ու հոգ տանիլ մօրուաց : Սոյն
բանը, կ'ըսէ Լիպեր, կը ցուցընէ նաև
ուրիշ ազգաց վրայ ըրած քննութիւններ :

Պուցէ այս հիւանդութիւնն եղած
ըլլայ գլխաւոր ու սկզբնական պատճառ
մը շատ ազգաց մէջ մօրուքին բոլորու-
վին ածիլելու :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Բարակցաւ՝ դեղ :

Սբիւսպըրի անգղիացի բժիշկը ըրած
շատ յաջող փորձերով կը հաստատէ որ
բարակցաւի դէմ պարզ բայց շատ զօ-
րաւոր դեղ է խոզի ճարպը՝, զոր պէտք
է կ'ըսէ ամէն օր այնչափ մաս բան որ
կէս ժամու բաւէ՝ հիւանդին կունակն
ու կողերը քսել ու շփել : Տասնըհինգ
քսան օրէն կը սկսի հիւանդը զգալա-
պէս դեղին օգուտը իմանալ : Լյոս
պարզ դեղը ուրիշ բժիշկներ ալ փոր-
ձեր են ու կը հաստատեն :

Սբիւսպըրի բժիշկը այս գիւտն ան-
կէց անդրադարձաւ, որ գրեթէ ոչ եր-
բէք տեսնուեր է, կ'ըսէ, որ կենդա-
նեաց ճարպի վրայ աշխատող արուես-
տաւոր մը բարակցաւ բռնուած ըլլայ :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ոսկին պղնձէն զանազաներոյ դիւրին կերպ :

Ղշմարիտ ու զուտ ոսկին նոյնչափ
կտոր պղնձին գրեթէ երկուքը կը կըշ-
ռէ . այս տարբերութիւնը բաւական
նշան մըն է մաքուր ոսկեզօծած և կամ
ոսկիով խառնած պղնձեղէնը ոսկիէն
որոշելու : Բայց թէ որ կ'ուզես աւելի
ապահով ըլլալ, ա՛ռ պզտի ապակի գա-
ւազանիկ մը ու ծայրը բորակային թը-
թուի մէջ թաթխելէդ ետև փորձելի
մետաղի վրայ դպցուր : Եւ որ նոյն կէ-
տին կապոյտ կամ կանաչի զարնող բիծ
մը ելլայ՝ ըսել է թէ պղնձ կայ . իսկ ե-
թէ ամենեւին թթուովդ չայլայլի՝ ա-
պահով եղիր որ զուտ ու առանց խառ-
նուրդի է ոսկիդ :

1 Գ. Phthisie. ՏՃ. Վերէ՛ :

2 ՏՃ. Տօմաւ եւալ :